



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ

Ա.Ս. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



«ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԱՆՄԱՍՆ ՉՄՆԱՑԻՆ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՂ ՄԹՆՈՒՈՐՏԵՆ

Ինչպես տօնական այլ առիթներով, նույնպես ալ Ս. Յարութեան տօնին, «Արարատ» Տան բնակիչ տարեցները անմասն չմնացին Ս. Յարութեան տօնի մթնոլորտէն ու անոր վերանորոգող ներգործութենէն:

Չորեքշաբթի, 27 Ապրիլին, Ս. Եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ «Արարատ Տան» Միշըն Յիլզի համալիրի մատրան մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասու անդամներուն:

Հոգեւորականաց դասը նախ այցելեց հաստատութեան հիւանդանոցի բաժինը, ուր յատուկ աղօթք կատարեց ու երգեց Ս. Յարութեան տօնի շարականներ. պատասպարեալները Ս. Հաղորդութիւն ստացան եւ վերանորոգեցին մեր եկեղեցական ու ազգային աւանդներուն հետ իրենց հաղորդակցութիւնը: Առաջնորդ Սրբազանը բարեմաղթութիւններ ու շնորհաւորութիւններ ուղղեց պատասպարեալներուն:

Աւելի ուշ, հաստատութեան մատրան մէջ, Ս. Պատարագ մատուցեց եւ քարոզեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Յաւարտ Ս. Պատարագի, տեղի ունեցաւ հաւաքական խոստովանանք, որմէ ետք՝ տարեցները ստացան Ս. Հաղորդութիւն: Չատկուան շարականներու երգեցողութեամբ եւ աւանդական տնօրինեքի արարողութեամբ, Առաջնորդ Սրբազանն ու Հոգեւոր Հայրերը բարեմաղթութիւններ փոխանցեցին հաստատութեան բնակիչներուն, պաշտօնեւութեան եւ տնօրէնութեան, ապա հիւրընկալուեցան ճաշով:

Յայտնենք նաեւ, որ Թեմիս Երիտասարդաց անդամ-անդամուհիներ Աւագ Շաբաթ, 23 Ապրիլի առաւօտուն նույնպէս այցելեցին Միշըն Յիլզի «Արարատ Տուն»ը, եւ շարականներու երգեցողութեամբ, ազգային երգերով ու նուագով եւ բանաստեղծութիւններու արտասանութեամբ ուրախացուցին հայ մամիկներու ու պապիկներու սրտերը:

EASTER DIVINE LITURGY AT "ARARAT HOME"

On the morning of Wednesday, April 27th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Easter Divine Liturgy at Ararat Home in

Mission Hills. Prelacy clergy members participated in the Divine Liturgy, which is celebrated each year on this occasion.

Clergy members first visited the nursing facility where they led a prayer service and offered Holy Communion to the residents. The Prelate also conveyed his Easter wishes to the residents.

Divine Liturgy was then celebrated at the Chapel. Very Rev. Fr. Muron Aznikian celebrated Divine Liturgy and delivered the sermon. Residents in attendance received Holy Communion at the conclusion of the service.

The Prelate and clergy were then hosted to a lunch by the directors.

On Saturday, April 23rd, Easter Eve, members of the Armenian Church Youth Association visited Ararat Home where they presented to the residents a program of Easter hymns, traditional Armenian songs, and poetry.